

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 154

Կոչում – Հոսալով ասուածային նախագիտութիւնից եւ նախասահմանութիւնից գտնուում է փրկութեան կարգի մէջ եղած առաջին մասնիկը՝ այսինքն կոչման տարրը: Որպէսզի Ասուած կատարի Իր յաւիտենականութեան մէջ հաստատուած նպատակները, Նա նախ կոչում է մեզ ժամանակուում եւ պատմութեան մէջ: Ասուածաբանականօրէն, Աստուծոյ կոչումը բաղկացած է երկու գլխաւոր մասերից՝ արտաքին կոչը եւ ներքին կոչը, որոնց հարկ է ճշգրիտօրէն զանազանել:

Արտաքին կոչում – Նախքան սերտենք ներքին կոչումը, կարելոր է նախ նկատի առնենք արտաքին կոչի բնութիւնը ու ծաւալը: Աստուծոյ այս կոչումը չի ճանաչուած Ասուածաշնչում որպէս «արտաքին» կոչը, իսկ այսպէս է նշանակուած ասուածաբանութեան մէջ քանի որ այդ մի ազդեցիկ կոչ չի: Աստուծոյ արտաքին կոչումը կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի (դասակարգերի): Այդ գալիս է մարդուն ստեղծագործութեան միջոցով՝ այսինքն բնութեան միջոցով (Մաղմոս 19:1-4, Հռովմայեցիս 1:19-20): Ստեղծուած կարգը վկայում է բոլոր մարդ արարածներին, բոլոր տեղերում, եւ բոլոր ժամանակներում, մատնանշելով դրա Ստեղծիչին՝ յայտարարելով Նրա փառաւոր յատկանշերը՝ ինչպէս Նրա իմաստութիւնը, զօրութիւնը, բարութիւնը, յաւիտենականութիւնը, եւ այլն:

Աստուծոյ կոչը նաեւ գալիս է մարդուն խղճմտանքի միջոցով (Հռովմայեցիս 2:14-15): Ասուած իւրաքանչիւր մարդու խղճմտանքի մէջ ներդրել է բնածին գիտութիւն Նրա եւ Նրա հիմնական բարոյական պահանջների վերաբերեալ : Ֆիզիքական աշխարհքի եւ խղճմտանքի յայտնութիւնները բնութեամբ ընդհանուր են եւ տարածուում են իւրաքանչիւր եւ ամեն մարդ արարածին: Թէպէտ սրանք չեն յայտնուում որեւէ բան Քրիստոսի կամ փրկութեան ճանապարհի մասին, սակայն դրանք պարզապէս մատակարարում են Աստուծոյ առթիւ եղած բաւարար տեղեկութիւն, որով Ասուած կոչում է բոլոր մարդկութեան ամեն տեղ որ գիտակցել, պաշտել, պատուել եւ հնազանդել Նրան որպէս իրենց Արարիչը (Գործք Առաքելոց 17:26-27): Բայց մարդ արարածներ, իրենց մեղաւոր ու պղծուած վիճակուում, մերժում են այդ ինչ որ գիտեն որ ճշմարիտ է՝ այսինքն որ կայ մի Ասուած, որ Նա սուրբ է, եւ թէ նրանք մեղաւորներ են, եւ թէ պատասխանատու են Նրան (Հռովմայեցիս 1:21, 25, 3:20):

Աստուծոյ կոչը նաեւ գալիս է մարդուն Աստուծոյ Խօսքի միջոցով, որը մատակարարում է շատ տեղեկութիւն Աստուծոյ բնութեան նկարագրի եւ գործունէութեան մասին (Մաղմոս 19:7-11, Բ. Տիմոթէոս 3:16-17, Եբրայեցիս 1:1-2): Այս յայտնութիւնը յատուկ է եւ հասնում է միայն նրանց որոնց կարդացել կամ լսացել են Աստուծոյ Խօսքը: Այն հռչակում է ընկած մարդու պիղծ վիճակը, Աստուծոյ փրկութեան ծրագիրը Յիսուս Քրիստոսի անձի ու արարքի միջոցով, եւ Աստուծոյ ներման եւ փրկութեան խոստումները: Ասուած կոչում է բոլոր նրանց որոնք լսում են աւետիսը որ ապաշխարեն եւ հաւատան Իր Որդուն որպէսզի փրկեն (Մարկոս 1:15, Յովհաննէս 5:24, Գործք Առաքելոց 2:38, 16:31, 17:30, 19:4, 26:19-20, Հռովմայեցիս 10:13): Աստուծոյ այս արտաքին կոչումը չի սահմանափակուում որեւէ յատուկ ազգին կամ լեզուին կամ մարդկանց դասակարգին, այլ այդ գնում է բոլոր նրանց որոնք լսում են այդ (Եսայիա 45:22): Աստուծոյ ժողովուրդը հռչակելու են արտաքին կոչումը բոլոր ժողովուրդին անխարոյթեամբ: Մենք չգիտենք թէ ովքեր են ընտրեալները եւ ովքեր չեն, եւ ուստի իրաւունքը չունենք բացատրելու որեւէ մէկին (Մարկոս 16:15-16, Գործք Առաքելոց 1:8, Հռովմայեցիս 10:14-15, Բ. Կորնթացիս 5:20):

Բայց նոյնիսկ այս աւետարանի կոչումը եւս մերժում է լսողների մեծամասնութիւնից (Մաղմոս 81:10-12, Առակաց 1:22-26, Յովհաննէս 5:39-40, Գործք Առաքելոց 13:46, Հռովմայեցիս 2:4-5, 10:18-21): Թէկուզ շատեր գուցէ լսեն աւետիսի կոչը, սակայն միայն նրանք որ Ասուած է ընտրել կ'պատասխանեն հաւատքով (Մատթէոս 22:14): Իրականում, արտաքին կոչը ինքն իրեն ազդեցիկ չէ: Անկումի պատճառով, բոլոր մարդիկ գալիս են այս աշխարհք ընկած, հոգեւորապէս մեռած, անկարող եւ անկամեցող որոնելու Աստուծուն եւ ցանկանալու Աստուծոյ բաները (Ծննդոց 6:5, 8:21, Հռովմայեցիս 3:9-12, 18, 5:10, 8:5-7, Ա. Կորնթացիս 2:14): Առանց Աստուծոյ շնորհքը մարդ արարած ճնշում է ճշմարտութիւնը, եւ մերժում է Աստուծոյ արտաքին կոչը: Մի բան մարդուց դուրս պէտք է որպէսզի ազդեցիկ դարձնի արտաքին կոչը, եւ այդ մի բանը Սուրբ Հոգու գործն է:

Ոմանք լսելով որ միայն ընտրեալները կ'պատասխանեն Աստուծոյ արտաքին կոչումը, նրանք վիճում են թէ այս կեղծ է դարձնում կոչումը: Բայց ինչպէս անցեալ դասերում տեսանք, Ասուած փափաքում է որ բոլոր մարդիկ իրենց մեղքերիցը ապաշխարեն եւ փրկուեն: Այս է Աստուծոյ սուրբ եւ բարեսէր դիրքորոշումը կամ կեցածքը մարդկութեան հանդէպ (Մաղմոս 81:13, Եզեկիէլ 18:23, 32, 33:11, Հռովմայեցիս 2:4, Ա. Տիմոթէոս 2:4): Այս ներկայացնում է Աստուծոյ յայտնուած կամքը՝ այդ ինչ որ բարի է մարդու համար եւ հաճելի Աստուծուն: Եւ թէպէտ այս գաւա է Աստուծոյ գաղտնի կամքից, բայց եւ այնպէս այդ է Աստուծոյ ջերմեռանդ ցանկութիւնը: Ոչ-ընտրեալները չեն պատասխանում Աստուծոյ կոչումը ոչ որովհետեւ Ասուած արգելում է նրանց, այլ որովհետեւ նրանք բնութեամբ անկարող եւ անկամեցող են գալու Նրան (Յովհաննէս 3:19): Մեղաւոր մարդու այս վիճակը չի անվաւերացնում կամ հերքում Աստուծոյ բացարձակ իրաւունքը Իր բանաւոր արարածներից ուղղարարութիւն եւ հնազանդութիւն պահանջելուց. ոչ էլ այդ ազատում է մարդուն իր բարոյական պատասխանատուութիւնից (Միքիա 6:8):